ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> նոյեմբերի 2013թվականի N 126 -Ա

ԱՄԱՍԻԱՅԻ ՇՐՋԱՆԻ ԳԱՌՆԱՌԻՃ ԳՅՈՒՂԻ 6 ՓՈՂՈՑ 5 ՏԱՆ ԲՆԱԿԻՉ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ Գ.ՆԺԴԵՀԻ 30/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԵՏՆԱՆՑՈՒՄԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ 420000 ՀՀ ԴՐԱՄ ԳՈՒՄԱՐԻՑ 100000 (ՀԱՐՅՈՒՐ ՀԱԶԱՐ) ՀՀ ԴՐԱՄ ՆԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքապետին է դիմել Ամասիայի շրջանի Գառնառիճ գյուղի 6 փողոցի 5 տան բնակիչ Սահակ Պարթևի Աբրահամյանը (դիմումը քաղաքապետարանում մուտքագրված՝ 2013 թվականի նոյեմբերի 04-ին Ա-7234 թվագրմամբ)՝ իր կողմից վարձակալության պայմանագրով վարձակալած Գ.Նժդեհի 30/3 հասցեում գտնվող գետնանցումի վարձակալության վճարի 2013 թվականի տարեկան 420000 դրամ գումարից 100000 դրամ ներելու խնդրանքով: Հաշվի առնելով այն, որ տեղադրված 15 (տասնհինգ) տաղավարներից գործում է միայն 4 (չորս) տաղավարը, հիմք ընդունելով Սահակ Աբրահամյանի դիմումը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 431-րդ հոդվածով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Ներել Ամասիայի շրջանի Գառնառիճ գյուղի 6 փող. 5 տան բնակիչ Սահակ Պարթևի Աբրահամյանի կողմից վարձակալության պայմանագրով վարձակալած Գ.Նժդեհի 30/3 հասցեում գտնվող գետնանցումի վարձակալության վճարի 2013 թվականի տարեկան 420000 Հայաստանի Հանրապետության դրամ գումարից 100000 (հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամը:

2. Պարտավորեցնել Սահակ Աբրահամյանին՝ տաղավարների լիարժեք գործելու ուղղությամբ ձեռնարկել կոնկրետ քայլեր, որպեսզի ապահովվի սահմանված վարձավճարի ամբողջությամբ վճարումը 2014 թվականին:

Կողմ (20) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան_____

Գ.Ադամյան_____

Ա.Բաղեյան _____

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան_____

Մ.Գաբոյան_____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եղիգարյան _____

Գ.Թաթարյան_____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան_____

Տ.Հովհաննիսյան_____

Վ.Հունանյան_____

Ն.Մեսրոպյան_____

Ռ.Մխիթարյան_____

Է.Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

2013թ. նոյեմբերի 12

ք.Գյումրի